

ՊԱՐՈՆ ՏԵՐ ԿԱԼՈՒԱԾԻ ՀԱՐՑԸ

Պարոն Տերի կալուածը ճանչցուած է որպէս Գրիգոր Պարոն Տեր Պատրիարքի (1560-1645) ճգնաբանը, ուր ինք կ'առանձնանար ծովապահութեան եւ աղօթքի համար: Համաձայն հայկական աղբիւրներուն, Պարոն Տեր գնած է վերոյիշեալ կալուածը եւ անոր մէջ ճգնած: Իր մահէն վերջ, Պարոն Տերի կալուածը եղած է հայ վանականներու աղօթքի եւ խորհրդածութեան վայր մը:

Պարոն Տերի կալուածը կը գտնուի Բեթղեհէմի Այտա գաղթակայանի հիւսիսը, եւ Թանթուրի հարաւը:

Վերոյիշեալ կալուածը ունի մօտ 143 տունում հնագիտական հողատարածք, որու մէջ կան 1600 ձիթենիի ծառեր եւ ստորերկրեայ հին աղօթարաններ եւ գերեզմաններ: Կալուածին մէջ, հարաւային կողմը, կանգուն կայ վանական եռաշարկ շէնք մը:

Պարոն Տեր կալուածին խնդիրը սկսաւ Իսրայէլի պետութեան, յանձնաժողովի Գրաւեալ Հոգերու գլխաւոր հրամանատար Իցիտաք Էիթանի եւ Իսրայէլի Պաշտպանութեան նախարարութեան գլխաւոր պատասխանատու հրամանատար Ամուս Նարոնի զինուորական հրահանգէն շատ առաջ, ձեռք դնելու Նրուսաղէմի Հայոց Պատրիարքարանին պատկանող Պարոն Տեր անունով ճանչցուած կալուածին վրայ, որպէս զի այնտեղ կառուցուի սահմանագիծի պարիսպ մը բաժնետէսով Պաղեստինեան շրջանները Նրուսաղէմ քաղաքէն:

ԽՆԴԻՐԸ

1. 2001 թուականի Մայիս ամսու սկիզբին, Իսր. բանակը առանց տեղեակ պահելու Հայոց Պատրիարքարանը եւ պատճառաբանելով երկրին ապահովութեան հարցը, ապօրէն կերպով մտաւ Պարոն Տերի կալուածը եւ դիրք բռնեց Պարոն Տերի վանքին մէջ: Պատրիարքարանի գրաւոր բողոքին վրայ, 16 Մայիս 2001-ին, Պաշտպանութեան նախարարութիւնը կալուածի վրայ վեցամսեայ ժամանակաւոր ձեռք դնելու հրամանագիր հանեց:

Բեթղեհէմ քաղաքին վրայ պարտադրուած շրջապատումին պատճառաւ, Հայոց Պատրիարքարանը ստիպուեցաւ լուր մնալ, յուսալով որ շրջապատումին վերջ կը տրուի եւ ապա կը կարողանայ վնասուց հատուցման հարցով զբաղիլ: Հայոց Պատրիարքարանը իր նարտարապետին միջոցաւ պատրաստել տուաւ վնասներու ցանկ մը եւ յղեց առ Պաշտպանութեան նախարարութիւն բողոքագիր նամակով մը 14 Սեպտեմբեր 2001-ին:

2. 27 Օգոստոս 2001-ին, Պեք-ձալայի շրջան ներխուժումին ընթացքին, Իսր. բանակը հրետանիներով քարուքանդ ըրաւ Պարոն Տեր կալուածը շրջապատող Պարիսպը ոտնակոխ ընելով հնամենի ձիթենիի ծառերը: Որպէս սկզբնական քայլ, հրետանիները քաջին զինուորական նամբայ մը, ինչ որ Պաշտպանութեան նախարարութիւնը կը ծրագրէ վերածելու անջատման պատի մը եւ ապահովութեան նամբայի մը Իսրայէլի եւ Գրաւեալ Հոգերու միջեւ: Հայ վանականներ Բեթղեհէմէն շտապեցին դէպի Պարոն Տերի կալուած եւ պահանջեցին որ Իսր. Բանակը դուրս գայ Պատրիարքարանի կալուածէն եւ կարգադրութիւններ տեսնէ վնասուց հատուցման հարցով: Իսր. Բանակը կարեւորութիւն չընծայեց հայ վանականներու պահանջին: Հայոց Պատրիարքարանի նարտարապետը այցելեց վերոյիշեալ կալուածը եւ ցանկագրեց յաւելեալ վնասները գնահատելով 77,000 Ամերիկեան Զոլարի վնաս:

Հայոց Պատրիարքարանը իր փաստաբանին միջոցաւ բողոքագիր նամակ յղեց կցելով վնասուց հատուցման գնահատականը 14 Սեպտեմբեր 2001-ին:

3. Պաշտպանութեան նախարարութիւնը երբեք գրաւոր չպատասխանեց Հայոց Պատրիարքարանի բողոքագիր նամակներուն, որոնք կապ ունէին Իսրայէլեան քաղաքի Պարոն Տերի կալուածին հասցուցած վնասներուն երբ մտաւ Պեք ձալա եւ Բեթղեհէմ շրջանները:

4.- 20 Դեկտեմբեր 2001ին, Իսրայելեան բանակը գրաւոր պատասխան նամակ մը յղեց Հայոց Պատրիարքարանին: Նամակին բովանդակութիւնը այն էր, թէ Իսր. Բանակը երբեք ուրիշ կոխած չէ յիշեալ կալուածէն ներս եւ իրենց կարծիքով՝ բանակը ոչ մէկ վնաս հասցուցած է Պարոն Տէրի կալուածին: Եթէ Պատրիարքարանը դժգոհութիւններ ունի՝ կրնայ բողոքել Պաշտպանութեան Նախարարութեան Ապահովագրութեան եւ Դատական հարցերու Յանձնախումբին:

5.- 14 Յունուար 2002ին, Պաշտպանութեան Նախարարութիւնը ուրիշ նամակ մը յղեց Հայոց Պատրիարքարանին, նշելով թէ Պատրիարքարանին յղած 14 Սեպտեմբեր 2001 թուակիր բողոքագիրը նկատառման տակ է:

6.- 25 Մարտ 2002ին, Հայոց Պատրիարքարանը Պաշտպանութեան Նախարարութեան ուղղուած նամակ մը յղեց, վերյիշեցնելով անոնց որ դեռ Պատրիարքարանը ցարդ յստակ պատասխան չէ ստացած Պարոն Տէրի վնասուց հատուցման հարցով:

7.- 21 Ապրիլ 2002ին, Իսր. Բանակը առանց կալուածատէրերուն ընդհանրապէս եւ Հայոց Պատրիարքարանին մասնաւորապէս տեղեկացնելու՝ ճամբայ բացաւ Պարոն Տէրի շրջանին կալուածներուն ընդմէջէն, որ կը սկսի Կիւրյի գլխաւոր ճամբայէն, անցնելով Պարոն Տէրի կալուածին ընդմէջէն (բաժնելով զայն երկու անպէտ հողամասերու) կը միանայ Բեք-դեհէմի գլխաւոր ճամբայարհին: Երբ յիշեալ ճամբան բանալու աշխատանքները սկսան, Իսր. Բանակը քանակապէս հին ստորերկրեայ մեր աղօթատեղիները եւ իսկ հարիւրաւոր հին ձիթենիի ծառեր: Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչ՝ Հայր Բագրատ շտապեց դէպի Պարոն Տէրի կալուած եւ հանդիպեցաւ Պաշտպանութեան Նախարարին խորհրդատուին եւ Իսր. Բանակի ներկայացուցչին հետ՝ յանձնին հրամանատար Ամիթայ Լէվիի, որ վստահեցուց թէ ճամբան ժամանակաւոր է եւ անմիջապէս որ կացութիւնը խաղաղի՝ կալուածին կացութիւնը պիտի դարձնեն ինչպէս որ էր: Անոնք նաեւ խնդրեցին Հայոց Պատրիարքարանէն որ վարձու ստանան Պարոն Տէրի մեր եռալարկ շէնքը, վերածելու զայն որպէս զինուորական կեդրոն: Այդ խնդրանքը մերժուեցաւ տեղւոյն վրայ: Անոնք խոստացան նաեւ գրաւոր ներկայացնել Պատրիարքարանին իրենց կատարած ապօրինի աշխատանքները Պարոն Տէրի կալուածէն ներս: Այդ երբեք չըրին:

Հայոց Պատրիարքարանը վերյիշեալ հարցով Տնօրէն Ժողով գումարեց:

8.- Հայոց Պատրիարքարանը մինչեւ 23 Մայիս 2002, մշտական ձեւով կապ պահեց Հրամանատար Ամիթայ Լեւիի հետ որպէսզի Պաշտ. Նախարարութիւնը իր խնդրանքները եւ ծրագիրը գրաւոր ներկայացնէ: Հակառակ Պատրիարքարանի դիմումներուն՝ գրաւոր ոչ մէկ դիմում չեղաւ Պաշտ. Նախարարութեան կողմէ: Հայոց Պատրիարքարանը ստիպուած բողոքագիր ուղարկեց Պաշտ. Նախարարութեան 23 Մայիս 2002ին, շեշտելով հետեւեալը.-

ա.- Վերջերս, Իսրայելեան Բանակը ճամբայ բացաւ հազար մեթր երկարութեամբ Հայոց Պատրիարքարանի «Պարոն Տէր» կոչուած կալուածին ընդմէջէն, առանց Պատրիարքարանի արտօնութեան կամ գիտակցութեան: Բանակը կը ծրագրէ կառուցել ապահովութեան պատ մը, որ կրնայ մեծ վնասներ հասցնել Պարոն Տէր կալուածին:

բ.- Պաշտ. Նախարարութեան եւ Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչներուն միջեւ՝ հանդիպումներու ընթացքին, առաջարկուած էր եւ համաձայնուած՝ որ կառուցուելիք պատը պիտի ըլլայ ներկայ Պարոն Տէրի սահմանին վրայ եղող պատը, որ կը բաժնէ Պարոն Տէր կալուածը Այտա գաղթավայրէն:

գ.- Հայոց Պատրիարքարանը կը խնդրէ Պաշտ. Նախարարութենէն, որ Իսր. Բանակին տայ անհրաժեշտ հրահանգները, որպէսզի հետամուտ ըլլան առաւել վնասներ չհասցնելու Պարոն Տէրի կալուածին:

9.- 19 Յունիս 2002ին, Իսր. Բանակի եւ Պաշտ. Նախարարութեան ներկայացուցիչներու հրաւերին ընդառաջելով՝ Յունաց եւ Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչները հանդիպեցան խնդրոյ առարկայ վայրը հոն ստուգելու

հարցին կննդոտ կողմերը: Այս հանդիպման, Հայր Բագրատ առարկեց ծրագրին անընդունելի կողմերուն վրայ եւ շարունակաբար պահանջեց որ նամբան փոխադրուի մինչեւ ներկայ հարաւային պատը, որ կը բաժնէ Պարոն Տէր կալուածը Այտա Գաղթավայրէն:

10.- Խնդրանքներուն որպէս պատասխան, Պաշտպանութեան Նախարարութեան եւ Իսրայէլի Բանակին ներկայացուցիչ՝ Մովսէլ Համպըրկըր, 23 Յունիս 2002ին, Հայոց Պատրիարքարանին յանձնեց Պարոն Տէր կալուածին վրայ ձեռք դնելու գինուորական հրահանգ մը: Այս հրահանգը արձակուեցաւ նամբուն բացումէն շատ անելի յետոյ: Զինուորական սոյն հրահանգը ստորագրուած էր Իսրայէլի Պետութեան կողմէ, յանձնին՝ Գրաւեալ Հոդերու գլխաւոր հրամանատար՝ Իսիթաֆ էլթանի եւ Պաշտպանութեան Նախարարութեան Գլխաւոր վարիչ հրամանատար Ամոս Նարոնի կողմէ, որպէս զի այնտեղ կառուցուի սահմանագիծի պարիսպ մը բաժնելով Պաղեստինեան շրջանները Նրուսդէմ քաղաքէն:

11.- 25 Յունիս 2002ին, Հայոց Պատրիարքարանը երկրորդ անգամ ըլլալով հրահանգեց իր Ճարտարապետին, որպէսզի պատրաստէ Բանակին կողմէ պատնառուած վնասուց ցանկը: Վանքի Ճարտարապետը իր պատրաստած վնասուց ցուցակին համեմատ գնահատեց 311,757 Ամերիկեան Դոլարի ծախք:

12.- 26 Յունիս 2002ին, Պաշտպանութեան Նախարարութեան հրաւերին ընդառաջելով, Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչներ՝ Վանքի Փաստաբան Մէլէն Գուրբի եւ Հայր Բագրատ ուղղուեցան Թէլ Ավիվի Պաշտպանութեան Նախարարութեան կեդրոն հոն հանդիպում ունենալու տուեալ հարցով: Հանդիպման ընթացքին՝ Պաշտպանութեան Նախարարութեան Կալուածոց Գրասենեակի պատասխանատու՝ Մովսէլ Ալոն, շեշտեց թէ իրենք պատրաստ են կառուցուելիք Ապահովութեան Պատի լայնքը նուազեցնել 50 մետրէն մինչեւ 27 մետր, բայց եւ այնպէս Ապահովութեան պատնառաւ պատրաստ չեն Ապահովութեան Պատը կառուցել Պարոն Տէր կալուածի ներկայ հարաւային պատի եզերքը: Ան նշեց թէ կառուցուելիք Ապահովութեան պատը ի վերջոյ պիտի դառնայ սահմանագիծի մը՝ նման Իսրայէլի եւ Յորդանանի միջեւ եղող սահմանագիծուն: Աւելցուց նաեւ թէ Պաշտպանութեան Նախարարութիւնը կը կամենայ Պարոն Տէրի ներկայ շէնքը վարձու առնել եւ վերածել զայն զինուորական կեդրոնի մը: Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչները մերժեցին նման առաջարկ մը եւ ինդրեցին Նախարարութենէն որ վերանայի ծրագիրը: Այս հարցով Տնօրէն Ժողով գումարուեցաւ:

13.- 10 Յուլիս 2002ին, Հայոց Պատրիարքարանի Կալուածոց Գրասենեակին մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ Պաշտպանութեան Նախարարութեան ներկայացուցիչներու եւ Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչներուն միջեւ: Հանդիպման կը նախագահէր Լուսարարապետ Տէր Նուրհան Արք. Մանուկեան: Պաշտպանութեան Նախարարութեան ներկայացուցիչները՝ գլխաւորութեամբ Մովսէլ Ալոնի մերժեցին Հայոց Պատրիարքարանի խնդրանքը՝ որ էր կառուցուելիք Ապահովութեան Պատը տեղափոխել Պարոն Տէր կալուածի ներկայ Հարաւային պարիսպի եզերքը:

14.- Անել կացութեան մը մատնուելով, 14 Յուլիս 2002ին, Հայոց Պատրիարքարանը իր փաստաբանին միջոցաւ, գրաւոր առարկեց Պաշտպանութեան Նախարարութեան կառուցելիք Ապահովութեան Պատի ծրագրին դէմ եւ յանձնեց զայն Թէլ Ավիվի նման առարկութիւններ ընդունող Դատարանի Բաժնին:

15.- Ի հետեւում վերոյիշեալ անել կացութեան, Հայոց Պատրիարքարանը ստիպուած դիմեց Հայ եւ Միջազգային Մամուլին, որպէսզի Պարոն Տէրի հարցը անարձագանգ չանցնի: Հայ եւ Միջազգային Մամուլը իր կարգին լուռ չկեցաւ եւ հասցուց հարցը առ որ անկ է: Բազմաթիւ նամակներ ուղարկուեցան եւ հասցուց հարցը առ որ անկ է: Բազմաթիւ նամակներ ուղարկուեցան Միացեալ Նահանգներու Նախագահ՝ ձորն Պուշին, Քուլըն Փաուլին եւ Միացեալ Միացեալ Նահանգներու ընդհանուր վարչամարմնին, որպէսզի Պարոն Տէրի հարցը Նահանգներու ընդհանուր վարչամարմնին, որպէսզի Պարոն Տէրի հարցը

բարւո՛ք լուծման մը յանգի: Բողոքագիր մամակներ յղուեցան Իսրայէլի վարչապետին եւ Իսր. Արտ. Գործ. Նախարարութեան նոյն հարցով:

15.- 30 Յուլիս 2002ին, Հայոց Պատրիարքարանը Իսրայէլի Արդարութեան Գերագոյն Ատեանին դիմեց առարկելով Պաշտպանութեան Նախարարութեան ծրագրին դէմ: Գերագոյն Ատեանը կապ պահելէ յետոյ Պաշտպանութեան Նախարարութեան պատասխանատու անձանց հետ, Նախարարութենէն բացատրագիր պահանջեց Պարոն Տէրի կալուածին հարցով:

Նուիրապետական Աթոռներու Գահակալներ, Թեմակալ Առաջնորդներ, Հայրենի Պետութեան Արտաֆին Գործոց Նախարարութիւն, կազմակերպութիւններ եւ նախանձախնդիր անհատներ իրենց մտահոգութիւնները արտայայտեցին առ որ անկ էր: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի թելադրանքով, Հռոմի Սրբազան Քահանայապետ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը, Ընդհանուր Ռուսիոյ Ալեքսէյ Բ. Սրբազան Պատրիարքը եւ կրօնապետներ իրենց դիմումագիրքերը առ ափեցին պետական ղեկավարներուն:

16.- 13 Օգոստոս 2002ին, Հայոց Պատրիարքարանը Պարոն Տէրի հարցը Երուսաղէմի մէջ գտնուող հիւպատոսներուն ծանօթացնելու միտումով հանդիպում կազմակերպեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Դահլիճին մէջ:

17.- 16 Օգոստոս 2002ին, կրկին Պարոն Տէրի հարցը օտար Դեսպաններուն ծանօթացնելու միտումով՝ Հայոց Պատրիարքարանը նման հանդիպում մը կազմակերպեց Յոպպէի Հայոց Սուրբ Նիկողայոս Վանֆին մէջ:

18.- 13 Օգոստոս 2002ին, Պաշտպանութեան Նախարարութեան հրաւերին ընդառաջելով, Հայոց Պատրիարքարանի փաստաբան Մէզէն Քուրթի եւ Հայր Բագրատ գացին Թէլ Ավիվի Պաշտ. Նախարարութեան գրասենեակ բանակցելու Պարոն Տէրի կալուածին հարցով: Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչներուն միացաւ Փաստաբան Էթան Եփշթայն, որ Բարեգործականի Ատեմապետ՝ Տիար Պերն Սեդրակեանի յանձնարարութեամբ եւ Պատրիարք Սրբազան Հօր համաձայնութեամբ պիտի օգտակար ըլլայ յիշեալ հարցը իր բարւո՛ք լուծումին հասցնելու: Սոյն հանդիպման ընթացքին, Պաշտպանութեան Նախարարութեան ներկայացուցիչներ՝ Շլոմո Ալոնի գլխաւորութեամբ, համաձայնութիւն յայտնեցին կառուցուելիք Ապահովութեան Պատը տեղափոխել եւ տանիլ մինչեւ Պարոն Տէրի Կալուածին ներկայ հարաւային պարիսպի եզերքը: Սակայն եւ այնպէս շեշտեցին Պարոն Տէրի շէնքին տանիքը գործածել որպէս դիտարան, եւ թէ Ապահովութեան Պատի լայնքը պիտի ունենայ ոչ աւելի քան 50 մետր լայնք: Գալով Պարոն Տէրի կալուածէն ներս մուտք գործելու հարցին, Պաշտպանութեան նախարարութիւնը յանձն առաւ ստուգել եւ լուծում առաջարկել Պատրիարքարանին համար առանձին մուտք ապահովելու հարցով: Սոյն հանդիպման ատենագրութիւնը ուղարկուեցաւ Պատրիարքարանի փաստաբաններուն, որպէսզի քննարկեն եւ սրբագրութիւններ ընեն ընդհանուր համաձայնութեան մը գալու նպատակով:

19.- 22 Օգոստոսէն մինչեւ 4 Սեպտեմբեր 2002, Փաստաբան Էթշթայն՝ Հայոց Պատրիարքարանի փաստաբան Մէզէն Քուրթիի եւ Հայր Բագրատի հետ յիշեալ հանդիպման ատենագրութիւնը քննարկելու եւ սրբագրութիւններ կատարելէ յետոյ, Տնօրէն Ժողովի յանձնարարութեամբ, Պաշտպանութեան Նախարարութեան Կալուածոց Բաժնին ուղարկեց Պատրիարքարանի առարկած կէտերն ու սրբագրութիւնները: Այս սրբագրութեան համաձայն, Պաշտպանութեան Նախարարութիւնը յանձն կ'առնէ գործադրել ներդոյիշեալ կէտերը:

ա.- Ապահովութեան Պատը պիտի անցնի Պարոն Տէրի հարաւային պարիսպի եզերքով եւ պիտի ունենայ ոչ աւելի քան 50 մետր լայնք (ներկայացուած քարտէսին համաձայն):

բ.- Իսրայէլեան Բանակին կողմէ Պարոն Տէրի վնասուած հարաւային պարիսպը վերանորոգել մօտ 4 մետր բարձրութեամբ:

գ.- Զգրաւել Պարոն Տէրի ոչ շէնքը, ոչ ալ շէնքին տանիքը:

դ.- Ապահովութեան Պատի տարածքը եւ անոր հիւսիսը եղող Պարոն Տէրի ձիթաստանը ներառեալ շէնքը պիտի մնայ Հայոց Պատրիարքարանի սեփականութիւն եւ Ապահովութեան Պատի հիւսիսը եղող ամբողջ տարածքը պիտի մնայ իրաւունքը Հայոց Պատրիարքարանի անձեռնմխելի գործածութեան:

ե.- Զարգիլի Պատրիարքարանի կամ անոր ներկայացուցիչներու մուտքը Պարոն Տէր կալուածէն ներս: Պատրիարքարանը իր կողմէ անուանացանկ մը պիտի ներկայացնէ Բեթղեհէմի մուտքին եղող սահմանագլխուն պատասխանատու անձերուն, որուն համաձայն անուանացանկին մէջ նշուած անձինք իրաւունք պիտի ունենան առանց արգելիի եւ ամէն ժամանակ Պարոն Տէր կալուած մուտք գործել:

զ.- Զարգիլի Հայոց Պատրիարքարանի կամ անոր ներկայացուցիչներու մուտքը Պարոն Տէր կալուածէն ներս Երուսաղէմի (Կիւոյի) կողմէն: Հայոց Պատրիարքարանը իրաւունք ունի Պարոն Տէր կալուածէն ներս մուտք գործել ամէն ատեն առանց արգելիի: Եթէ ապագային Պատրիարքարանի արգիլուի Պարոն Տէր կալուած մուտքը յիշեալ կողմէն, Պաշտպանութեան Նախարարութիւնը անցք մը պիտի ապահովէ Պատրիարքարանի գործածութեան համար:

է.- Եթէ քաղաքական ապահովութեան համար դիտարանի մը խիստ կարիքը զգացուի, ապա այդ պիտի զետեղուի Պարոն Տէրի շէնքէն հեռու (նուագագոյնը տաս մեթր հեռաւորութեամբ), Ապահովութեան Պատին կից, դառնալով անոր մէկ քաժինը: Դիտարանը կրնայ ունենալ առաւելագոյնը քառասուն մեթր քառակուսի տարածութիւն:

ը.- Հայոց Պատրիարքարանը բացարձակ իրաւունք պիտի ունենայ Պարոն Տէրի շէնքին մէջ քնակութիւն հաստատելու, ձիթաստանը մշակելու եւ ուխտագնացութիւններ կազմակերպելու:

թ.- Պաշտպանութեան Նախարարութիւնը կամ Իսրայէլեան բանակը յանձն կ'առնէ ձեռք չզննել ոչ Պարոն Տէր կալուածին, ոչ շէնքին, ոչ ալ անոր տանիքին վրայ: Եթէ քաղաքական ապահովութիւնը պահանջէ նման բան զինուորական գործողութեանց համար, ապա այդ պիտի կատարուի հայոց Պատրիարքարանի համաձայնութեամբ եւ համագործակցութեամբ:

ժ.- Հայոց Պատրիարքարանի եւ Պաշտպանութեան Նախարարութեան միջեւ պայմանագիր ստորագրելէն վերջ, վաթսուն օրերու ընթացքին, Հայոց Պատրիարքարանը Իսրայէլի Արդարութեան Գերագոյն Ատեանէն յետ պիտի քաշէ իր բողոքագրի առարկութիւնները:

ժա.- Ապահովութեան Պատի կառուցումէն վերջ, առաւելագոյնը մինչեւ մէկ ամիս, Պաշտպանութեան Նախարարութիւնը պարտի ծածկել նախապէս բացուած խրամատը: Այն ձիթեղնի ծառերը որոնք արմատախիլ պիտի ըլլան Ապահովութեան Պատի շինարարութեան հետեւանքով, Պաշտ. Նախարարութիւնը պարտի տեղափոխել նախապէս բացուած եւ գոցուած խրամատին եւ նամբուն տարածքին մէջ:

ժբ.- Երբ քաղաքական կացութիւնը իր նախկին խաղաղ վիճակին դառնայ եւ ապահովութեան կարիքը չզգացուի, վերոյիշեալ Ապահովութեան Պատի կառուցման համար տրամադրուած հողաշերտին վրայ ձեռք չզննելու հրահանգները Պաշտպանութեան Նախարարութիւնը չեղեալ պիտի նկատէ եւ պարտաւոր է ամէն ինչ ետ իր նախկին վիճակին վերադարձնել:

ժգ.- Պաշտպանութեան Նախարարութիւնը պիտի հատուցէ Հայոց Պատրիարքարանը այն բոլոր վնասներուն համար, զորս պատճառեց Բեթղեհէմի եւ շրջակայ շրջաններու գրաւման ընթացքին:

20. Զորեմբարքի, 20 Նոյեմբեր 2002ին, վերոյիշեալ կէտերէ բաղկացած համաձայնագիրը ստորագրուեցաւ Հայոց Պատրիարքարանի եւ Պաշտպանութեան Նախարարութեան միջեւ:

ԱՍԳՐԱՏ ԱՐԼ. ՊՈՒՐՃԷԲԵԱՆ

Հայոց Պատրիարքարանի Կալուածոց Տեսչութիւն